





Ա. Մ. Առլուսով

Հայի բարձաքին միստելը
Վերացնելու Մասին

338.4
Մ-86

ԿՈՒԶՐԱՏ
ՅԵՐԵԿԱՆ
1 9 3 4



17 FEB 2010



Պ. Մ. ՄՈՒՏՈՎ

Վ. Ա. Մուլոսով

338.4(47)

Մ-86

մշ

Ազգային թանգարական
Վերացնելու Մասին

1010
42207

903
~~1177~~

ԿՈՒԶՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1 9 3 4

104.07.2013

31380

ՀԱՅԻ ՔԱՐՏԱՅԻՆ ՍԻՄԵՍՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԸՆԿ. Վ. ՄԱՂԱՏՄԻ ԳԵԼԻՎԱԾԱՄ ՀԱՄ Կ (բ) Կ Կ Կ
ԱՂԵԽԱՎԱՐՈՒՄ, 1934 թի նոյեմբերի 25-ին

1. Հացի հարային սիստեմի վերացումը մեր հաջողաւ-
րյունների ցուցանիւմ է

Բնկերներ, պատահական չե, վոր հացի
քարտային սիստեմի վերացման հարցը գըր-
ված է հենց տվյալ մոմենտում: Այդ հարցը
հասունացել է:

Կուսակցության վորոշումը՝ մատակարար-
ման ասպարիզում նորմավորում (քարտա-
յին սիստեմ) կիրառելու մասին, վերաբե-
րում է 1928 թվականի վերջերին: 1929
թվականի սկզբներից հացի, իսկ այսուհետեւ
նաև մի շարք այլ մթերքների քարտա-
յին սիստեմը սկսեց կիրառվել Մոսկվայում,
Լենինգրադում և ամբողջ սպառող գոտում,
իսկ վորոշ ժամանակից հետո նաև ամ-
բողջ Խորհրդային Միության մեջ: Այդ-
պիսով, հացի քարտային սիստեմի գոյու-
թյունն ընդգրկում է վերջին վեց տարի-
ները:

Մենք հացի քարտային սիստեմ մտցրենք
այն ժամանակի, յերբ մենք կողանուեսու-
թյուններ ու խորհանակառնություններ քիչ

Վ. М. МОЛОТОВ

ОБ ОТМЕНЕ КАРТОЧНОЙ СИСТЕМЫ
ПО ХЛЕБУ

Доклад на пленуме ЦК ВКП (б)
25 ноября 1934 г.

Партизат, 1934, Թրիսր

ունեյինք, յերբ գյուղում վերակշռում եր
զյուղացիական մանր անհատական տնտե-
սությունը՝ իր խղճուկ տեխնիկայով և
ցածր բերքատվությամբ։ Այս ժամանակվա-
ցիր ու ցան գյուղացիական տնտեսության
ծայրահեղորեն հետ մնալն արդյունաբերու-
թյան ածումից, վորդ սոցիալիստական շի-
նարարությունից, հարկադրեց մեզ մատա-
կարարման քարտային սիստեմ մացնել՝
չնայած դրա բոլոր անհարմարություննե-
րին։

Ներկայումս մենք արմատական փոփոխու-
թյուն ունենք գյուղատնտեսության մեջ։
Այժմ գյուղում տիրապետում է կոլտնտեսա-
յին կարգը՝ զինված բազմահազար ավտո-
մեքենաներով, տրակտորներով, կոմբայն-
ներով և գյուղատնտեսական այլ բարդ մե-
քենաներով։ Այս տարիների ընթացքում
կազմակերպված կոլտնտեսություններն զգա-
լիորեն ամրապնդվեցին և հաստատուն
կերպով կանգնած են իրենց վոտքերի վրա։
Ստեղծված են բոլոր հիմնական նախադըր-
յալները՝ գյուղատնտեսության արագ վե-
րելքի համար։ Կոլտնտեսությունները

խորհանտեսությունների հետ միասին, ներ-
կայումս մեծ ուժ են գյուղատնտեսության և
վողջ ժողովրդական տնտեսության վերելքի
գործում,

Գյուղում այդ վերակառուցում կատարե-
լու համար պահանջվեց 6—7տարի։ Յեզ
հենց այդ 6—7 տարիների ընթացքում,
գյուղատնտեսությունը անհատականից կոլ-
տնտեսայինի, մանրից՝ խոշորի վերակառու-
ցելու այդ ժամանակաշրջանի ընթացքում
նրան մեքենայական հզոր սարքավորում
տալով, հենց այդ ժամանակաշրջանումն եր,
վոր անհրաժեշտ եր կոլեկտիվացման գործն
ամբապնդելու համար, հարկավոր յեղավ քար-
տային սիստեմ մացնել հացի մատակարար-
ման ասպարիդում։ Ինչպես պատահական չե-
այն, վոր հենց տվյալ մոմենտումն ենք
մենք դնում հացի, ալյուրի և կրուպայի
մատակարարման քարտային սիստեմը վե-
րացնելու հարցը, այնպես ել պատահական
չեր նաև այն հանդամանքը, վոր հենց 1928
թվականին կուսակցությունն ու կառավա-
րությունը վորոշեցին մացնել այդ քարտա-
յին սիստեմը։

Ինչի՞ւ մենք վեց տարի առաջ մացրինք
քարտային սիստեմը: Վարովինեակ մենք
ցանկանում ենինք ապահովել մեր յերկրի
արագ ինդուստրացման քաղաքականության
իրականացումը, ապահովել կուսակցության
կողմից ընդունված ինդուստրացման տեմպը,
ապահովել չնայած այն ժամանակվա մեր
գյուղատնտեսության ծայրահեղ հետամնա-
ցությանը: Քաղաքական վողջ իրադրու-
թյունը՝ ներքին և միջազգային, այդ եր
պահանջում մեզանից: Այդ անհրաժեշտ եր
նաև գյուղատնտեսության շահերի տեսակե-
տից, նրա տեխնիկական վերազինումն ա-
րագցնելու շահերի տեսակետից:

Ժողովրդական տնտեսության անկման
մոլոնտին չեր, վոր մենք մտցրինք քար-
տային սիստեմը: Վհչ, մենք այն ժամանակ
ել արդյունաբերության խոշոր վերելք
ունեինք: Սակայն այդ վերելքին սկսեց
սպառնալ մանր անհատական գյուղացիա-
կան հողագործության հետաֆնացությունը:
Վարպեսզի գյուղատնտեսության հետամնա-
ցության սկանճառով արդյունաբերության
վիճում թույլ չտայինք, մենք պետք ե-
նատկապես հոգ տանեյինք բանվորներին

Հաց մատակարարելու մասին, քաղաքներին
ինչպես և թեթև արդյունաբերությանը
հումք տվող գյուղատնտեսական շրջաննե-
րին հաց մատակարարելու մասին:

Քարտային սիստեմի կիրառումը հեշտ
գործ չեր: Սակայն, ինչպես ցույց են տա-
լիս վաստերը, մենք հասանք մեր նպատա-
կին:

Մենք կարողացանք ապահովել մեր ար-
դյունաբերության անշեղ վերելքն այդ վեց-
յոթ տարիների ընթացքում: Մենք պահպա-
նեցինք ինդուստրացման տեմպը: Մենք
հաղթականորեն կատարեցինք առաջին
հնգամյակը և հաջողությամբ կատարում
ենք յերկրորդ հնգամյակի ինդիքները:
Մենք հասանք այն բանին, վոր ինդուստրա-
ցումը—հանուն վորի հարկավոր եր ապա-
հովել արդյունաբերական կենտրոններին և
գյուղատնտեսական վորոշ շրջաններին հաց
մատակարարելու վորոշակի պլանը—այդ
ինդուստրացումը աարեցարի ծավալից՝
համապատասխան մեր պետության պլանի,
համապատասխան կուսակցության դժի:
Մենք հասանք այն բանին, վոր ինդուստ-

րիան իր վերելքի ընթացքում ստեղծեց սոցիալիստական խոշոր գյուղատնտեսության՝ տարեց տարի ամրապնդվող տեխնիկական բազա: Արդյունքներն իրենք խոսում են իրենց մասին: Այդ անհնարին կլիներ առանց հացի մատակարարութը համապատասխան ձեռվ կազմակերպելու, առանց քարտային սիստեմի:

Մենք ներկայումս վերացնում ենք հացի նորմագործումը (քարտային սիստեմը): Մենք այդ անում ենք այն մոմենտին, յերբ վոչ միայն արդյունաբերությունն և հաստատուն վերելք ապրում, այլ յերբ գյուղատնտեսությունը ևս արդեն կանգնել ե արագ վերելքի ճանապարհին: Տվյալ պայմաններում, քարտային սիստեմի վերացումով և հացի ու այլ մթերքների լայն առկտուրն ամենուրեք ծավալելով, մենք ցանկանում ենք ապահովել ժողովրդական տնտեսության հետագա վերելքը, սոցիալիզմի նոր և ել ավելի խոշոր հաջողությունները մեր յերկրում:

1928—1934 թ. թ. ժամանակաշրջանը, վորը կապված եր հացի քարտային սիստե-

մի կիրառման հետ, մի ժողովնակաշրջան եր յերբ մենք իրականացնում եյինք կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակում գործիրու քաղաքականությունը և յերբ այդ քաղաքականությունը՝ սոցիալիստական շինարարության ասպարիզում կուսակցության կողմից կիրառվող բոլոր ձեռնարկությունների հետ միասին՝ ապահովեց կոլտնտեսային կարգերի հաղթանակը գյուղում: Ներկայումս կոլեկտիվացման գործը ԽՍՀՄ-ում հիմնականում ավարտված է: Այժմ մեր գյուղատնտեսությունն իր վճռական մասով արգեն վերակառուցվել և սոցիալիստականորեն, թեվակոխել ե իր իսկական վերելքի շրջանը և կարող ե ապահովել հացի մատակարարումը վոչ այնպիս, ինչպիս անցյալ տարիներում: Այդ յերեսում և վերջին տարիների փորձից և հատկապիս ընթացիկ աարվա հացամթերման ու հացի գնման փորձից:

Ի՞նչ վիճակում եր հացի մատակարարման գործն անցած վեց-յոթ տարիների ընթացքում, յերբ մեզ մոտ գոյություն ուներ քարտային սիստեմը:

Մեր առաջ խնդիր եր դրված—ապահովել քաղաքների և արդյունաբերությանը հումք տվող գյուղատնտեսական շրջանների մատակարարումը։ Այսուհետեւ մեր առաջ խնդիր և դրված—ապահովել արդյունաբերական գլխավոր կենտրոնների առաջնահերթ մատակարարումը և քանվոր դասակարդի վերոշ խմբերի՝ նախ և առաջ հարվածայինների առաջնահերթ մատակարարումը, այդ մատակարարություն ապահովել պետական հաստատուն գներով այն ժամանակաշրջանում, յերբ շուկայի գները չափազանց բարձր ելին։ Յեվ ահա, չնայած տյն բանի, վորայն ժամանակաշրջանը, վորին վերաբերում և խոսքը, քաղաքների հսկայական աճման և գյուղում տեխնիկական կուլտուրաների հարաճուն մթերման ժամանակաշրջանն եր, մեզ հաջողվեց հարկ յեղած մակարդակի վրա սրահել բանվորական կենտրոնների մատակարարումը և ապահովել արդյունաբերությանը հումք տվող տեխնիկական կուլտուրաների շրջաններին հաց մատակարարելը։

Մենք այդ բանին հասանք գյուղի կուլտուրակային վերականուցման համար մղվող

պայքարի ճանապարհին, կուլտակի վրա ծաղվալուն հարձակում գործելու ճանապարհին, հաշամթերման ճակատում մղվող անշեղ պայքարի ճանապարհին։

Յերբ մենք քարտային սիստեմ եյինք մտցնում, 1928 թվականի բերքեց մեր մթերած հացը կազմում եր 650 միլիոն փութ։ Հացի այդպիսի քանակությամբ մենք չեյինք կարող տիրապետել հացահատիկային շուկային և վերջ դնել հացի սպեկուլյացիային։

Այն ժամանակից ի վեր դրությունն արմատապես փոխվել եւ։

Այս առարի հացամթերման ու հացի գլուման գծով, հատկապես հացի գնման հաջողության շնորհիվ, վորը մենք կատարում ենք բարձրացված գներով, մենք կարող ենք պետության տրամադրության տակունենալ վոչ պակաս քան մեկ և կես միլիարդ վութ հացահատիկ։ Հետեւաբար մենք այժմ մեր տրամադրության տակ ունենք հացահատիկի մի պաշար, վորն ավելի քան յերկու անգամ գերազանցում եայն քանակությանը, վոր մենք ունեյինք 1928 թվականին։

Ինչ վերաբերում և պարենային կուլտուրաներին, ապա այսաեղ մենք ել ավելի ցայտուն համոզիչ պատկեր ունենք: 1928 թվականին մենք մթերել եյինք ընդամենը 416 միլիոն փուլթ պարենային կուլտուրաներ: Այս տարի մենք կարող ենք հույս ունենալ յենթագրեր վոր պետությունն իր տրամադրության տակ կունենա մոտ մեկ միլիարդ փուլթ պարենային կուլտուրաներ: Այսպիսով այս տարի մենք պարենային կուլտուրաներ կունենանք մոտ յերկու և կես անգամ ավելի՝ քան 1928 թվականին: Այս թվերն արդեն խոսում են իրենց մասին:

Թե այս ցուցանշական թվերն ինչպես են կապված գյուղում տեղի ունեցած փոփոխությունների հետ՝ այդ յերկում և հետևյալից: Նույնիսկ 1929 թվականին, յերբ գյուղացիության շրջադարձը դեպի կոլտնտեսություններն արդեն վորոշակի դարձավ, մը թերված հայտահատիկի 86 տոկոսը մենատընտեսներին եր պատկանում և 14 տոկոսը միայն կոլտնտեսություններին ու խորհատնություններին: Այժմ մենք միանգամայն

հակասակ պատկեր ունենք: Այս տարի հացահատիկի միայն 8 տոկոսն ե պետությունն ստացել մենատնտեսներից, իսկ 92 տոկոսը՝ կոլտնտեսություններից ու խորհատնտեսություններից:

Սրանից յերկում ե, վոր կոլեկտիվացման շնորհիվ և միայն, վոր մենք ներկայումս անհամեմատ ավելի յենք տպահովված հացով, քան մի քանի տարի առաջ, յերբ գյուղում ամենուրեք գերակշռում եր գյուղացիական մանը անհատական անտեսությունը: Կոլտնտեսային կարգը միայն՝ իր գերքերի ամբացման շնորհիվ՝ խորհատնտեսությունների հետ միասին, սաեղծեց այնպիսի պայմաններ, վորոնք ապահովեցին քաղաքների ու տեխնիկական կուլտուրաների շրջանների հացի մատակարարման հարաձուն կարեքների բավարարումը վերջին տարիների ընթացքում: Միայն շնորհիվ այն բանի, վոր կուսակցությունն ամբողջ յեռանդով գյուղում պայքար ծավալեց կուտքնտեսային կարգերի համար և պայքար մեկց ինդուստրացման գործն ամբողջությամբ ապահովելու համար, մենք կարողա-

10/0
4/2/2018

յանք ձեռք բերել այս հաջողությունները
հացամթերման գործում և մատակարարման
գործում: Այժմ մենք կարող ենք տուած ըն-
թանալ ել ավելի հաստատուն քայլերով:

Քարտային սիստեմի կիրառումը հանդի-
պեց մեր թշնամիների մարզարեյություննե-
րին, վորոնք բարբաջում եյին խորհրդային
իշխանության խորտակման անխուսափե-
լիության մասին: Կյանքն ինքը ծիծաղեց
այդ մարզարեների վրա:

Հացի քարտային սիստեմի կիրառումն
այն հանդամանքներից մեկն եր, վորը ծայ-
րահեղորեն ուժեղացրեց աջ և «ձախ» տար-
երի տառանումները կուսակցության մեջ:
Աջ և «ձախ» ոպորտունիստների վախն ու
նզովքները գյուղի կոլեկտիվացման ասպա-
րիվում կուսակցության ընդունած հաստա-
տուն կուրսի դեմք կապիտալիզմի մնացորդ-
ների վրա ծավալուն հարձակում գործելու
վոլչ քաղաքականության դեմ, ճայրահեղո-
րեն ուժեղացան հատկապես քարտային
սիստեմ կիրառման կապակցությամբ: Կու-
սակցությունը պաշտպանեց իր քաղաքա-
կանությունն ու այն հաջողությամբ կիրա-

ռեց կյանքում, և այժմ հացի քարտայիլն
սիստեմը վերացնելու մեջ մենք չենք կա-
րող չտեսնել կուսակցության նոր հաղթա-
նակը, մի հաղթանակ վորը պետք է իր
արտահայտությունը գտնի սոցիալիստական
անտեսության ել ավելի ուժեղ վերելքի և
աշխատավոր ւթյան մատակարարման հե-
տագա բարելավման մեջ:

Այս և այն ժամանակաշրջանի հանրա-
գումարների քաղաքական գնահատությու-
նը, վորին վերաբերում և վերջին տարինե-
րի քարտային սիստեմը:

2. Քարտային սիստմը յեզ նրա վերացման նախապահականութը

Ինչ եր ներկայացնում հացի քարտային սիստմը, ինչպես և զարգացել նա այս առարիների ընթացքում և գործնականապես ինչպես և նախապահաստվել նրա վերացումը:

Սկսենք քաղաքներից: Քաղաքային ապաբնակչության մատակարարումը կազմակերպելուն եր մեր առաջին խնդիրը:

Տվյալ պահին մեզ մոտ կենտրոնացված մատակարարումով ընդգրկված ե 40,3 միլիոն հոգի, հաշված ընտանիքի անդամների հետ միասին: Ինչպես հայտնի յէ մեզ մոտ գոյություն ունեն մատակարարման մի քառակի 10,3 միլիոն հոգի, առաջին ցուցակ՝ 11,8 միլիոն հոգի, յերկրորդ ցուցակ՝ 9,6 միլիոն հոգի, յերրորդ ցուցակ՝ 8,6 միլիոն հոգի: Մատակարարման ասպարիզում առավելություններ են տրված հատուկ և առաջն ցուցակներին:

Վերջին աարիների ընթացքում մատակարարման կոնտինգենտների աճումը յերեսում

Կ հետեւյալ աղյուսակից:	
Հացի մատակարարմամբ ընդգրկված քաղաքային ամբողջ կոնտինգենտը.	(միլիոն հոգի)
1930 թ.	26
1931 թ.	33,2
1932 թ.	40,3
1933 թ.	39,6
1934 թ.	40,8

Այս աղյուսակը ցույց է տալիս, թէ ինչպես եյին այլելանում կենտրոնացված կարգով մատակարարվող կոնտինգենտները: 1933 թվականին կենտրոնացված մատակարարումով ընդգրկված կոնտինգենտների նվազելը բացատրվում է նրանով, վոր անցյալ տարի բանմատակարարման բաժինների կազմակերպման կազմակցությամբ, բանվորների մատակարարումը հանձնվեց անմիջականորեն գործարաններին և այդ հանգամանքը հնարավորություն ավելց մաքրել բանվորների ու ծառայողների ցուցակներն այնպիսի տարրերից, վորոնք կապ չունեցին ձեռնարկության հետ և սիալ կերպով քարտեր եյին ստանում:

Իսկ յեթե վերցնենք պետական ռեսուրսներից մատակարարվողների ամբողջ թիվը,

ներառյալ նաև տեղական ֆոնդերից կաշտարվող մատակարարութը, ապա մատակարարման ընդհանութը կոնտինգենտը ափյալ պահին զգալի չափով ավելի կլինի: Այդ կոնտինգենտը, վորի մեջ կմտնեն բանվորները, ծառայողները, ուսանողները, թոշակառուները և այլ խմբեր, կ'կազմի 25 միլիոն հոգի: Դրանց պետք ե ավելացնել ընտանիքի 24 միլիոն անդամներին և մի միլիոն տնայնագործներին: Այդպիսով կենտրոնացված և տեղական ֆոնդերից մատակարարվողների ամբողջ կոնտինգենտը ներկայումս կազմում է 50 միլիոն հոգի և նույնիսկ աշվելի:

Քաղաքային ազգաբնակության մատակարարութը նորմավորելու այս ամբողջ սիստեմի իրականացնելու համար, կարիք յեղավ ստեղծելու մի մեծ ապարատ, վորը բավականաշատ վոր արժի: Այդ ապարատի վրա կատարված ծախսերի մոտավոր հաշվարկութիւնը ցույց էն տալիս, վոր ամեն մի ամրացված աշխատավորի սպասարկմանն ընկնում ե տարեկան առնվազն 8 ոռոքի ծախս: Այդ նշանակում ե, վոր քարտերով՝

կենտրոնացված մատակարարմանը ընդպրկված ամբողջ կոնտինգենտի սպասարկումը պահանջում և ավելի քան 300 միլիոն ոռոքի ծախս:

Ավելորդ և ապացուցել վոր քարտերով մատակարարելու համար ստեղծված ապարատը հսկայական չափի յե հասել և տառապում ե բյուբոկրատիկ մեծ շրայլությամբ: Չնայած դրան, քաղաքի բանվորների ու ծառայողների մատակարարման քարտային սիստեմը, իր բոլոր թերություններով միասին, հասավ իր գլխավոր նպատակին: Նա ապահովեց բանվորների ու ծառայողների մատակարարումը ցածր գներով, չնայած, վոր քաղաքներում հացի շուկայական գները և պարենամթերքի գները գտնվում ելին շատ բարձր մակարդակի վրա:

Մեր յերկրորդ խնդիրն եր՝ կազմակերպել գյուղացիական աղքաբնակության մատակարարութը տեխնիկական մշակույթների շրջաններում: Այդ կաաւարդում եր արդյունաբերության համար գյուղատնտեսական հումք հանձնողներին՝ բամբակագործներին

վուշադրծներին, ծխախոտագործներին և
ուրիշներին հացահատիկով այսպես կոչված
«ապրանքավորելու» ձևով։ Այդ ապրանքա-
վորումն անհրաժեշտ եր գյուղատնտեսական
հումքը մեր մթերող կազմակերպություննե-
րին հանձնելը խթանելով (խրախուսելու) հա-
մար։ Բացի դրանից, ապրանքավորումը
գործադրվում եր նաև փայտեղեն մթերե-
լիս, մորթեղեն մթերելիս, ձկնորսության
ասպարիֆում և մի քանի այլ գեպքերում։

Այդ բոլորը հացահատիկային մեծ սե-
սուրսներ եր պահանջում պետությունից։
Միմիայն բամբակագործներին մատակարա-
րելու համար, մենք պետք ե, որինակ 1930
թվականին ծախսելինք մոտ 30 միլիոն
փութ, իսկ այս տարի արդեն 39 միլիոն
փթից ավելի։ Վուշ և կանեփ մթերելիս մեղ-
նից պահանջվում եր 1930 թվականին 5,5
միլիոն փութ հացահատիկ, իսկ այս տարի
պահանջվեց մոտ 11 միլիոն փութ։

Զանազան մթերումների ժամանակ ապ-
րանքավորման ծախսերը տարեց տարի ա-
վելանում եյին։ Սակայն առանց դրան ան-
կարելի յեր ապահովել այդ մթերումների
աճը։

Իսկ թե ինչպես եր ընթանում մթերում-
ների այդ աճումը, այդ ցույց և տալիս
թեկուղ հետեւյալը—1928 թվականից մինչև
1934 թվականը բամբակի մթերումն ավե-
լացել և 65 տոկոսով, թելատու վուշի մթե-
րումը՝ 70 տոկոսով, գեղին ծխախոտի մթե-
րումը՝ 70 տոկոսով, անտառանյութի մթե-
րումը՝ 124 տոկոսով, մորթիներինը՝ 128
տոկոսով, ձկան մթերումը՝ 41 տոկոսով։ Ընկ.
կեյները, վորն ուրիշներից ավելի լավ
և ծանոթ այդ գործին, գտնում ե, վոր տեխ-
նիկական մշակույթների շրջաններում շնոր-
հակի մթերումների ապրանքավորման, մենք
պետական գոնդերից մասամբ հացահատիկ
ենք մատակարարում մոտ 24 միլիոն հոգու։

Ինչպես տեսնում եք, գործը վերաբերում
և հացահատիկի խոշոր ծախսին այդ գյու-
ղատնտեսական շրջաններին մատակարա-
րելու համար։ Սակայն, մենք պետք ե ա-
պահովելինք այդ մատակարարումը պետա-
կան հացահատիկի գոնդերից, ցածր գնե-
րով, վորպեսզի թեթև արդյունաբերությունը
ապահովելինք հումքով։

Իհարկե գործի գրվածքի ներկա պայման-

ներում, յերբ մենք ցածր գներով տալիս
ենք այդ հացահատիկն, այն շրջաններում,
վորտեղ շուկայում հացի գինը գտնվում է
շատ բարձր մակարդակի վրա, այդպիսի
մատակարարման ամբողջ կարգը շաղկապ-
ված է մեծ թվով զանազան չարաշահում-
ների և ըյուրոկրատիկ խեղաթյուրութեաների
հետ: Այդ կարգի վերացմամբ և հացի լայն
առևտորի հաստատմամբ շահագրգոված են և
պետությունը և՛ այդ շրջանների գյուղա-
ցիալան աղքարնակությունը:

Կուսակցությունը և կառավարությունը
մշտապես սպայքար են մղել հացի և այլ
մթերքների մատակարարման կազմակեր-
պումը բարելավելու համար: Դրա համար
Քիչ գործ չի կատարվել քարտային սիստե-
մի գոյության ընթացքում:

Բացի դրանից, բանվորների մատակարա-
րումը բարելավելու համար գործադրվել են
նաև այլ միջոցներ:

Այդ նպատակով լայնորեն ծավալվել են
առաջինտրոնացված մթերութեանը, վորոնք
լրացուցիչ քանակությամբ մթերքներ են
տվել բանվորներին մատակարարելու համար

և վրանով իսկ լրացրել կենտրոնացված կար-
գով կատարվող մատակարարութը: Քիչ գործ
չի կատարվել նաև գործարանների պա-
րենամթերքի սեփական բաղա ստեղծելու ուղ-
ղությամբ, վորը նույնպես ողնում եր բան-
վորների մատակարարման բարելավմանը:
Պիտի և մատնացույց անել նաև բանվոր-
ների անհատական բանջարաբությունը,
վորը ծավալվել և մի քանի շրջաններում և
նման միջոցները:

Հասուկ նշանակություն են ունեցել այն
միջոցները, վորոնք կուսակցությունը և կա-
ռավարությունը գործադրել են, առևտուրը
բարելավելու ուղղությամբ:

Չնայած վերջին վեց տարում քարտային
սիստեմի ունեցած մեծ նշանակությանը,
կենտրոնը և ֆողկոմիսորնը բացառիկ ուշա-
գրություն եյին նվիրում ապրանքաշրջա-
նառության զարգացմանը, առևտորի գերի
մեծացմանը: Յեվ դա մեծ նշանակության
ունեցավ քարտային սիստեմի վերացումը
նախապատրաստելու գործում:

Ինչ և արված վերջին տարիներս առևտու-
րը զարգացնելու համար: Այստեղ գլուխվոր

հարցը պետական ու կոռուկերատիվ առևտությունների գարզացումն եւ Այդ ասպարիզում մենք քիչ նվաճումներ չունենք:

1928 թվականից, յերբ պետական ու կոռուկերատիվ խանութների ու կրպակների թիվը հասել եր 123 հազարի, ներկայում այդ թիվը հասել է 283.000-ի: Այդպիսով պետական—կոռուկերատիվ առևտության ցանցն ավելի քան կրկնապատկվել եւ: Ընդամեն մասնավոր առևտությն արագորեն ընթացավ վերացման ձանապարհով: Յեթե 1928 թվականին մեզ մոտ գեռնե կային 215.000 մասնավոր խանութներ ու կրպակներ (ամբողջ առևտության ցանցի 63 տոկոսը), ներառյալ նաև նրանցից ամենափոքրերը ապա այժմ մասնավոր առևտությ մոտ եւ դերոյի: Մասկայն այդ կապակցությամբ դժվար չեն հասկանալ վոր պետական կոռուկերատիվ ցանցի ներկա զարգացումը դեռ հեռու յեր բավարար լինելուց, վորպեսզի քաղաքի ու գյուղի սպառողների կարիքներին սպասարկի ինչպես հարկն եւ:

Վերջին տարիներս առանձնապես արագութեն եր զարգանում պետական առևտությունների գարզացումն եւ ասպարիզում մենք քիչ նվաճումներ չունենք:

Եւ վորը ներկայումս ունի ամբողջ առևտությունների մոռանալ վոր պետական խանութներն ու կրպակներն ընդհանուր առմամբ կոռուկերատիվայիններից ավելի խոշոր են:

Թե ինչպես եւ ավելացել մանրածախ ապրանքաշրջանառությունը, ցույց եւ տալիս հետեւյալը.—1928 թվականին նա կազմում եր 15,5 միլիարդ ռուբլի, 1934 թվականին, մոտավոր հաշվարկությունիվ, նա կազմելու յե 31 միլիարդ ռուբլի: Հիշեցնում եմ, վոր 1928 թվականին մասնավոր առևտությունները հատվածը կազմում եր գեռ 22,5 տոկոս, իսկ այժմ ինչպես ասացինք հասել եւ գերոյի:

Վերջին տարիներս կենաւկոմը և ժողկությունը մի քանի անգամ հասուկ միջոցներ են ձեռք առել վորպեսզի սահմանափակվի պարենամթերքի ու այլ ապրանքների նորմավորված մատակարարությունը ի վես նրանց առևտությունների առաջնորդությունը, քանից հասուկ միջոցներ են ձեռք առել վորով արգելվում եր ապրանքների ու մթերքների վորով խմբեր հանձնել նորմափորվող

մատակարարման՝ այդ ապրանքների ու
մթերքների սովորական առևտուրն ուժեւ-
ղայնելու նպատակով։ Նույն նպատակով
սահմանափակվում եր սեսական զանգան
կազմակերտությունների կենտրոնացված
մատակարարման ֆոնդերը։ Դրանով ավե-
լանում ելին պետական-կոռոպերատիվ խա-
նութներն ու կրպակներն ուղարկվող առշ-
րանքի ֆոնդերը։

Քարտային սիստեմի վերացումը նախա-
պատրաստելու համար հատուկ նշանակու-
թյուն ունեցավ աղատ վաճառքի զարգա-
ցումը։ Այդ գործին մեծ ուշադրություն
նվիրվեց։ Դրա շնորհիվ զգալի չափով բարձ-
րացավ մանրածախ ապրանքաշրջանառու-
թյան մեջ աղատ վաճառքի տեսակարար
կշիռ վերջին չորս տարում։ Ահա համապա-
տասխան թվեր ըստ տարիների՝

1931 թվականին 3 տոկոս.

1932 թվականին 11 տոկոս.

1933 թվականին 15 տոկոս.

1934 թվականին (նախատեսվող կատա-
րումը)՝ 24 տոկոս։

Ցեղե ներկայումս ընդհանուր ապրան-

քաշրջանառության մեջ աղատ վաճառք
կազմում և արդեն մի քառորդը, աղատ ար-
դյունաբերական ապրանքների նկատմամբ
(պլանավորվող 12 արդյունաբերական ապ-
րանք) աղատ վաճառքը նույնիսկ հասնում
և մի յերբորդի։ Աղատ վաճառքն արդեն
խոշոր լրացում և դարձել նորմավորվող մա-
տակարարման համար։ Զայած վոր աղատ
վաճառքի գները զգալիորեն ավելի յեն
քարտերով կատարվող նորմավորված մա-
տակարարման ապրանքների գներից, աղատ
վաճառքն արագորեն զարգանում և և ա-
ղատ վաճառքն ել ավելի ծավալելու պա-
հանջներ ստացվում են յերկրի բոլոր շըր-
ջաններից։

Հայի քարտային սիստեմի վերացման
նախապատրաստման տեսակետից պետք է
մատնանշել այն վաստը, վոր վերջին ժա-
մանակներս զգալի չափով նվազել է քար-
տերով կատարվող նորմավորված առևտու-
րի աղատ վաճառքի հացի գների տարբերու-
թյունը։ Համապատասխան միջնուրի նպա-
տակն եր հատկապես նախապատրաստել
հացի քարտային սիստեմի վերացումը։

վերջապես կոլտնտեսային առևտրի մաս
սին: Այդ առևտուրը վերջին շրջանում
նույնպես արագորեն աճեց:

Ժողովրդական Տնտեսության Հաշվառման
կենտրոնական վարչության հաշվարկումնե-
րով շուկաները բերվող զյուղատնտեսական
մթերքների քանակը, 28 խոշորագույն քա-
ղաքներում, համեմտուած անցյալ տարվա
հետ, ավելացել ե մոտավորապես 75 տոկո-
սով: Այդ վկայում ե, վոր կոլտնտեսային
առևտուրը արագորեն զարգանում ե:

Սակայն շնորհիվ պետական ազատ վա-
ճառքի զարգացման, վորի գլխավոր նպա-
տակներից մեկն եր պայքար մղել շուկա-
ներում սպեկուլյատիվ կերպով բարձրաց-
ված գների գեմ, այս տարի մենք ունենք
հացի և այլ պարենամթերքի շուկայական
գների զգալի իջեցում: Այդ յերեսում ե թե-
կուզ Մոսկվայի որինակից: Համեմատելով
այս տարվա սեպտեմբերի գներն անցյալ
տարվա սեպտեմբերի գների հետ, մենք
տեսնում ենք, վոր Մոսկվայում հաճարի
հացի շուկայական գներն իջել են 37 տո-
կոսով, հաճարի ալյուրի դինը 33 տոկոսով,

ցորենի հացի գինը 25 տոկոսով, ցորենի
ալյուրի գինը 47 տոկոսով, և կորեկի գինը
44 տոկոսով:

Մեզ հաջողվեց բավականաչափ իջեցնել
շուկաների ուռուացած գները Մոսկվայում և
այլ քաղաքներում: Այդ չեր կատարվի ա-
ռանց ազատ վաճառքի զարգացման:

Զարգացնելով պետական կոռպերատիվ
առևտուրը, ամեն կերպ ոժանդակելով ազատ
վաճառքի աճանքը, ինչպես և նպաստելով
կոլտնտեսային առևտրին, կուռակցությու-
նը և կառավարությունը հոգ եյին տանում,
վոր առևտրի պետական կարգավորման գոր-
ծը վոչ միայն չթուլանա, այլ հասնի պատ-
շաճ բարձրության: Այդ կապակցությամբ,
այս տարի ամառը, ընկ. Մտալինի նախա-
ձեռնությամբ ստեղծվեց ներքին առևտրի
ժողովածուած: Վորի առջև առանձնապես մեծ
խնդիրներ են դրված քարտային սիստեմի
վերացման կապակցությամբ:

Այժմ ճիշտ և մասնավոր առևտուր չկա,
բայց արագորեն աճում ե պետական ու
կոռպերատիվ խանութների ու կրպակների
ցանցը, աճում են նաև կոլտնտեսային շու-

կաները քաղաքներում ու գյուղերում։ Յեզ
անհրաժեշտ ե, վոր այդ զարդացումն ըն-
թանա հոգուտ պետության և հոգուտ ազ-
գաբնակության հարածուն պահանջների
սպասարկումն բարելավելու։ Փաստերով ա-
պացուցված ե, վոր պետությունը տիրել ե
շուկային ավելի, քան յերեկիցե, և այժմ
հնարավորություն ունի արագորեն զարգաց-
նելու ապրանքաշրջանառությունը՝ համա-
պատասխան քաղաքի ու գյուղի սպառով-
ների պահանջների։

Քարտային սիստեմը, մանավանդ վոր-
քան վոր գործը վերաբերում ե հացին, ալ-
յուրին ու կրուպային, իր դերը կատարեց։
Այժմ մենք ունենք այլ հնարավորություն-
ներ ու խողիրներ։

Մենք քարտային սիստեմն ոգտագործե-
ցինք վորպեսզի ապահովինք արդյունաբե-
րության հսկայական վերելքը և գյուղա-
տընաեսության սոցիալիստական վերակա-
ռուցումը։ Այնպիսի կարեոր մթերքների նը-
կատամակը, ինչպիսինն ե հացը, պետության
ռեսուրսներն այժմ ավելացել են անսախըն-
թաց չափով։ Ուստի հասել ե ժամանակը

հացի ու մի քանի այլ մթերքների քարտա-
յին սիստեմը վերացնելու համար։ Հասել ե
ժամանակն աղատվելու այդ բեռից և գոր-
ծը նոր հիմքերի վրա դնելու համար։ Ամե-
նուրեք հացի ու ալյուրի լայն վաճառքին
անցնելը մենք իրավունք ունենք համարե-
լու վորպես բոլշևիկյան քաղաքականության
մի նոր և խոշոր հաղթանակ վորպես ար-
դյունաբերության ու գյուղատնտեսության
հետագա վերելքը հեշտացնող մի պայման և
վորպես մատակարարումը բարելավելու
կարևորագույն պայմանը։

3. Հացի բարտային սիստեմի վերացումն իրականացնելու
միջոցների մասին

Ներկայումս մենք հնարավորություն ուշ
նենք դնելու 1935 թվականի հունվարից
հացի քարտային սիստեմը վերացնելու հար-
ցը, վորովհետև պետության տրամադրու-
թյան տակ կա բավականաչափ մեծ քանա-
կությամբ հացահատիկ։ Դրա փոխարեն ըռ-
լոր քաղաքներում և գյուղական շրջան-
ներում պետք է կազմակերպվի հացի ու
ալյուրի առևտուր, նոր պայմաններով։

Ի՞նչ վիճակի մեջ ե հացի ռեսուրսների
գործն առաջիկա տարում, յերբ այլև քար-
տային սիստեմ չի լինելու։

Դրա համար մենք արդեն ունենք հիմնա-
կան հաշվարկումները։ Դրանք ցույց են տա-
լիս, վոր 1935 թվականին պետությունը
կարող է ունենալ մոտ 120 միլիոն փթով
ավելի հացահատիկայն ֆոնդի, քան ներկա
տարում։ Մենք անպայման ապահոված
ենք հացով, մասնավորապես մինչև 1935
թվականի նոր բերքը։

Վոչ մի տարակույս չի կարող լինել վոր
քարտային սիստեմը, հացի չափազանց ցածր

գների հետ միասին, վերացվելուց հետո, մի
շաբաթ շրջաններում, վորտեղ այդ ցածր գը-
ները փաստորեն առաջ ելին բերում հացա-
հատիկի ռեսուրսների շռայլում, նախկին
քանակությամբ հաց չի պահանջվում։ Մենք
առաջիկա տարվա հացի պաշարի հաշիվները
կազմել ենք այնպես, վոր ապահոված լինի
նույնիսկ քիչ հավանական այնպիսի հնա-
րավորություն, ինչպիսին ե հացի պահան-
ջի զգալի ավելցումը և քաղաքումը և տեխ-
նիկական մշակույթների շրջաններում։ Մենք
առաջիկա տարում լիովին ապահովում ենք
հացի շուկայական պահանջի նաև այդ ավե-
լցումը։

Այդպիսով մենք այժմ, քարտային սիս-
տեմը վերացնելիս, լիովին և անպայման
ապահոված ենք հացով։ Հենցվելով հացի
մթերման պլանի կատարման ասպարիզում
մեր ձեռք բերած հաջողությունների վրա
և հացի գնման հաջողությունների վրա, վո-
րոնք գեռ պետք է ամրացվեն հետ մնացող
մաքղերում ու յերկրներում կատարվելիք
համառ աշխատանքով, մենք կարող ենք
վերջ տալ հացի քարտերին և դրանով իսկ

խոշոր քայլ անել դեպի առաջ մատակաւ-
րարման գործի բարելավման ձանապարհներ:

Այդ կատակցությամբ յես անհրաժեշտ եմ
համարում հաղորդելու հացահատիկների
1934 թ. բերքին վերաբերյալ այն տվյալը
ները, վորոնք հենց նոր են ստացվել Բեր-
քատվության Պետական Կենտրոնական
Հանձնաժողովներից: Առայժմ այդ տվյալը
ները պետք ե դիտել վորպես նախնական
տվյալներ, այնուամենայնիվ նրանք ար-
ժանի յեն լուրջ ուշադրության: Պետական
Հանձնաժողովի հաշվարկումներով այս տա-
րի մինչև բերքահավաքի մոմենտը հացա-
հատիկների բերքատվությունը մոտավորա-
պես անցյալ տարվա մակարդակի վրա յեր: Սակայն շնորհիվ բերքահավաքի կազմա-
կերպման վորոշ բարելավման՝ համեմատած
անցյալ տարվա հետ, այս տարի ազգա-
քնակության տրամադրության տակ լի-
նելու յե 250—300 միլիոն փութ ավելի հա-
ցահատիկ: Այդպիսով բերքահավաքի ժա-
մանակ տեղի ունեցող կորուստների դեմ
մղող պայքարի բարեկավման մեր առաջին
հաջողությունները արդեն վորոշ արդյունք-

ներ տվին և համանայն դեպս նրանք ծած-
կում են բերքի այն կորուստը, վոր ունե-
ցանք մենք այս տարի Ուկրայնայի հարա-
վային շրջաններում:

Այդ բոլորն ընկ. Ստալինին հնարավորու-
թյուն տվին հարց գնելու հացի քարտայինն
սիստեմը վերացնելու մասին: Կենտկոմի
Քաղըյուրոն ամբողջովին և լիովին հավա-
նություն տվեց ընկ. Ստալինի առաջարկին
և մացնում ե այդ առաջարկը կենտկոմի պլե-
նումը ի հաստատություն:

Ի՞նչպես ե կատարվելու հացի քարտայինն
սիստեմի վերացումը:

Հասկանալի յե, վոր քարտային սիստե-
մի վերացումը պետք ե կատարվի այնպես,
վոր բանվորների մատակարարումը վոչ մի-
այն չվատանա, այլ ընդհակառակը բարե-
լավվի և նախադրյալներ ստեղծվեն այդ գոր-
ծը հետագայում բարելավվելու համար: Ապա
անհրաժեշտ ե, վոր հումքի մթերումների
ապրանքավորման վերացումը վոչ միայն
չնվազեցնի, այլ ընդհակառակն ավելացնի
գյուղացիների շահագրգուվածությունը տեխ-
նիկական մշակույթների արտադրման նը-
կատմամբ:

Այս և լինելու մեր գործնական դիրքաւ
վորումը քարտային սիստեմի և մթերքնեա-
րի ապրանքավորման վերացման նկատ-
մամբ:

Առաջարկվում է քարտային սիստեմի վե-
րացումը կատարել 1935 թ. հունվարի 1-ից,
ոգտագործելով առաջիկա շաբաթներն այդ
միջոցի իրականացումը նախալատրաստե-
լու համար։ Հունվարի 1-ից պետք է վե-
րացվի ամեն տեսակի հացի, ալյուրի ու կրա-
պալի քարտային սիստեմը։ Այդ վորոշու-
մով սկիզբ կըրվի բոլոր մթերքների ու ապ-
րանքների քարտային սիստեմի վերացման։

Այդ միջոցի իրագործումը հնարավոր ու
նպատակահարմար է, սահմանելով յուրա-
քանչյուր մարզի (հանրապետության) հա-
մար հացի, ալյուրի ու կրուպայի միասնա-
կան պետական գներ, պետական, կոոպերա-
տիվ ամրող մանրածախ առևտրում։ Հացի
այդ միասնական մանրածախ գինը սահ-
մանվում է գոյություն ունեցող ազատ վա-
ճառքի բարձր գների և բաշահայտորեն
ցածր նորմավորված գների մոտավորակի
միջին մակարդակի վրա։

Միասնական գնի սահմանումով կասեց-
վում է հացի սպեկուլյացիան, վորի զար-
գացումն անխուսափելիորեն խթանվում եր
հացի յերկու տարրեր գների՝ ազատ վա-
ճառքի բարձր գնի և նորմավորված ցածր
գնի գոյությամբ։ Դժվարանում է գյու-
ղից բերված հացի սպեկուլյացիան, վորով-
հետև շուկայի պահանջն ապահովելու յե-
հացի պետական կոոպերատիվ առևտուրը՝
ներկա ազատ վաճառքի գնի հետ համեմա-
տած զգալի չափով իջեցված գնով։ Հողս և
ցնդում նաև հացի այն սպեկուլյացիան, վո-
րով զբաղվում եյին քարտերով նորմավոր-
ված ցածր գներով իրենց պահանջից ավե-
լի հաց ստացող մի քանի տարրերը քաղա-
քում։ Յուրաքանչյուր մարզում (հանրապե-
տության մեջ) միասնական պետական գնի
սահմանումը տնտեսական առաջնակարգ
նշանակություն ունեցող մի ձեռնարկու-
թյուն եւ։

Նոր սահմանված գները զանազան շըր-
ջաններում միատեսակ չեն լինելու։ Զի
կարելի պահպանել այն կարգը, վորը գո-
յություն ուներ քարտային սիստեմի ժամա-

նակը յերբ հաշվի չեյին առնվում հացի վաս
ձառքի պայմանները տարբեր շրջաններում,
յերբ հաշվի չեյին առնվում հացի փոխա-
դրման իրական ծախոները յերկրի զանա-
զան վայրերում:

Ներկա պլանի համաձայն ամբողջ ԽՍՀՄ-ն
ըստ հացի գների բաժանվում է 8 գոտի-
ների:

Ամենացածր գները, ինչպեսև առաջ մնում
են Միջին Ասիայի շրջաններում, վորն ան-
հրաժեշտ է բամբակի արտադրությունը.
Խթանելու համար, մի հումք, վորն այնքան
անհրաժեշտ է մեր արդյունաբերությանը:
Այդտեղ հաճարի հացի գինը սահմանվում
է 80 կոպ. մի կիլոգրամի համար, իսկ 96
տոկոսային ցորենի հացի համար 90 կո-
պեկ մի կիլոգրամին: Յերկրորդ գոտու մեջ,
վորտեղ համապատասխան գները 10 կոպե-
կով ավելի բարձր են, մտնում են Ռէկրայ-
նայի մեծ մասը և Հյուսիսային Կովկասը:
Մոսկվան և ԽՍՀՄ-ի կենտրոնական շրջան-
ները պատկանում են յերրորդ գոտուն,
վորտեղ հաճարի հացի յուրաքանչյուր կի-
լոգրամի գինը սահմանվում է մի ոռորվի:

իսկ ցորենի հացի գինը՝ մի ոռորվի 10 կոպեկ:
Ամենից ավելի բարձր գներ են սահման-
վում 7-րդ և 8-րդ գոտիների համար: 7-րդ
գոտում, վորին պատկանում են Հեռավոր
Արևելյան յերկրի ամենից ավելի խիտ բնակ-
ված մասը, հաճարի հացի գինը սահման-
վում է 1 ոռորվի 30 կոպեկ մի կիլոգրամի
համար, իսկ ցորենի հացի գինը 1 ոռորվի
40 կոպեկ մի կիլոգրամի համար:

Վերջապես առանձնապես հեռավոր շըր-
ջանների համար, ինչպիսին են Կամչատկան,
Սախալինը և ծայրագույն Հյուսիսը, վոր-
տեղ առանձնապես մեծ են փոխադրական
ծախսերը, հաճարի հացի գինը սահմանվում
է 1 ոռորվի 50 կոպեկ մի կիլոգրամի համար
և ցորենի հացի գինը 1 ոռորվի 60 կոպեկ
մի կիլոգրամի համար:

Քանի վոր սահմանվում է վոչ միայն հա-
ցի, այլև ալյուրի լայն վաճառք, մեծ նշա-
նակություն ունի Ճիշտ հարաբերություն
սահմանել նրանց գների միջև: Այստեղ ա-
վելորդ և մանրամասնորեն կանգ առնել
դրա վրա: Յես միայն կմատնանշեմ, վոր
ալյուրի համար ևս գները սահմանվում են

ըստ գոտիների, հացի գներին համապատասխան, միայն այն պայմանով, վոր գինն ավելի խթանի հացի գնումը, քան ալյուրի գնումը:

Այդ կապակցությամբ առաջվանից ավելի սուր կերպով ծառանում ե պետական-կոռպերատիվ հացամթերման զարգացման հարցը: Այդ կողմից յետ մնացած շրջաններն անհապաղ պետք ե միջոցներ ձեռք առնեն հացաթխումը զարգացնելու համար, վորը չափազանց անհրաժեշտ ե բանվորների մատակարարումը բարելավելու համար:

Հացամթերքի գների փոփոխումը կանդրապառնա նաև հանրային սննդի ասպարիզում գոյություն ունեցող գների վրա: Այդ առնձնապես վերաբերում ե կուրպային: Զի կարելի չխոսառվանել, վոր կրուպայի պետական նորմավորված գները նպաստում ենին կրուպայի փոնդերի վատնման: Այդ յերևում ե հետեւյալից: Նորմավորված մատակարարման բնագավառում մաքրած կորեկի մի կիրոգրամն այժմ արժե 27 կոպեկ, մինունը ժամանակ ազատ վաճառքում մի կիրոգրամ կրուպայի գինն ե 5 ռուբլի: Այդ-

պիսի աննորմալ տարբերություն թողնել նորմավորված և ազատ գնի միջև, նշանակում ե խրախուսել սպեկուլարնուներին, և շուայլել կրուպան, վորը հանդիսանում ե մասսայական մատակարարման ամենաարժեքավոր մթերքներից մեկը:

Մյուս կողմից մեզ մոտ միանգամայն սխալ վերաբերմունք ե ստեղծվել կարտոֆիլի նկատմամբ: Կարտոֆիլը, վորը մյուս յերկիրներում հանդիսանում ե կարեւորագույն պարենամթերք, մեզ մոտ համար պլանն ե մղված և յերբեմն անտնտեսավարի կերպով վատնվում ե: Մինչդեռ կարտոֆիլը, վորի բերքն այս տարի առանձնապես առատ ե, շատ գեղեցիկ կարող ե հաջողությամբ փոխարինել կրուպային: Մենք պարտավոր ենք այդ ուղղությամբ անհապաղ միջոցներ ձեռք առնել:

Այդ բոլորը ցույց ե տալիս այն ուղղությունը, վորով պետք ե վերակառուցվի մատակարարման սիստեմը քաղաքներում:

Քանի վոր քարտերի վերացմամբ հացի գները մի քիչ բարձրանալու յեն, անհրաժեշտ ե միաժամանակ համապատասխան չա-

փով բարձրացնել բանվորների ու ծառա-
յողների աշխատավարձը: Ի տարբերություն
ժողկոմիսորհի և Կենտկոմի մայիսի վորոշ-
ման յերբ աշխատավարձի բարձրացումը վե-
րաբերում եր միայն ցածր վարձատրություն
ստացող բանվորներին ու ծառայողներին,
այժմ բարձրացվում ե բոլոր կատեգորիա-
ներին պատկանող բանվորների ու ծառա-
յողների աշխատավարձը: Այդ բարձրացումը
տարբեր ե լինելու ըստ գոտիների, համա-
ձայն յուրաքանչյուր գոտում սահմանված
հացի գներին: Աշխատավարձի մեծ բարձ-
րացում ե կատարվելու այն վայրերում, վոր-
ակեղ հացի մատակարարումը կատարվում
եր ամբողջապես քարտերով: Աշխատավարձի
մի քիչ պակաս բարձրացում ե կատարվում
այն խմբերի նկատմամբ, վորոնք վերաբե-
րում եյին մատակարարման 2-րդ և 3-րդ
ցուցակներին:

Քարտային սիստեմի վերացման կապակ-
ցությամբ կատարված աշխատավարձի ամ-
բողջ բարձրացումը պետք ե կազմի 4 մի-
լիորդ 200 միլիոն ռուբլի: Այդ կազմում ե
ավելի քան 10 տոկոս հավելում աշխատա-

վարձի ներկա տարեկան ֆոնդի նկատմամբ:
Սակայն, ինչպես հայտնի յե, ազատ վա-
ճառքի խանութներից հաց գնելն այժմ ար-
դեռ մեծ նշանակություն ունի քաղաքային
ազգաբնակության գուալի մասի համար:

Իսկ քանի վոր, համեմատած գոյություն
ունեցող ազատ վաճառքի գների հետ, սահ-
մանվում ե հացի գնի խոշոր իջեցում՝ մի-
ջին հաշվով 30—35 տոկոսով, վորի հետեւ
վանքը կլինի նաև շուկայի գների իջեցու-
մը, ապա քաղաքային ազգաբնակության
այդ ամբողջ մասը հենց միայն այդ պատ-
ճառով զգալի չափով կշահի քարտային սիս-
տեմի վերացումից: Ել չենք խոսում աշխա-
տավարձի բարձրացման մասին:

Այժմ մեր լուծելիք կարևորագույն հար-
ցերից մեկն ե բամբակի, վուշի, կանեփի,
ծխախոտի և գյուղատնտեսական հումքի
այլ տեսակների գների հարցը, վորն այժմ
պետք ե բարձրացվի՝ հացամթերման ապ-
րանքավորման վերացման կապակցությամբ:
Կանգ չառնելով այդ գործի մանրամասնու-
թյունների վրա, յես կմատնանշեմ այն ուղ-

զությունը, վորով ընթացանք մենք այդ
հարցը լուծելիս:

Վերացնելով այդ ապրանքավորումը, մենք
մեր առջև խնդիր ենք դնում վոչ միայն
չժողովացնել գյուղացիների և կոլտնտեսու-
թյունների շահագրգովածությունը տեխնի-
կական մշակույթների արտադրման նկատ-
մամբ, այլ ընդհակառակն, ուժեղացնել այդ
շահագրգովածությունը և ավելի նպաստել
տեխնիկական մշակույթների զարգացմանը
մեր յերկրում: Այդպիսով բամբակագործնե-
րը, վուշ մշակողները, ծխախոտագործները
և մյուս գյուղացիները հացով ապրանքա-
վորման վերացումից վոչ միայն վոչինչ չեն
կորցնում, այլ ընդհակառակը շահում են:
Այդ և գյուղատնտեսական հումքի գների
բարձրացման իմաստը, վոր կառարվում է
այժմ: Նմանապես համապատասխան չափով
բարձրացվում են հանձնվող մորթու, ձկան,
փայտեղինի և այլնի գները, վորտեղ միթե-
րումը խթանվում (խրախուսվում) եր հա-
յով:

Հասկանալի յե, վոր գյուղատնտեսական
հումքի գների բարձրացումը առաջ երե-

բում լրացուցիչ մեծ ծախսեր պետության
կողմից: Յեկ այստեղ ել գործը վերաբերում
ե պետության մի քանի միջիարդ սուբլի-
մառացուցիչ ծախսերին: Սակայն հացի վա-
ճառքի գների բարձրացման կապակցու-
թյամբ այդ ծախսերը պետք ե հասուցվեն
և չպետք ե անզրադառնան արդյունաբերա-
կան ապրանքների գների վրա:

Աշխատավարձի բարձրացման և արդյուն-
աբերությանը մատակարարվող գյուղա-
ցիական հումքի գների բարձրացման մա-
սին մեր ասածը ցույց է տալիս, վոր լրա-
ցուցիչ յեկամուտների հետ միասին պետու-
թյունն ունենալու յել լրացուցիչ մեծ ծախ-
սեր: Մեր խնդիրն ե՝ այս վորոշումը կենս-
սագործել այսպես, վոր ծախսերը չգերազան-
ցեն յեկամուտներին:

Մեր նախնական հաշվարկումները ցույց
են տալիս, վոր այս ուեֆորմը կարելի յե-
կարգործել հավասարակշռելով յեկամուտ-
ներն ու ծախսերը: Մենք չենք ել կարող
նպատակ դնել վոր պետությունը վորևե-
լրացուցիչ յեկամուտ ստանա ներկա միջո-
ցառումը գործադրելուց:

Քարտային սիստեմի վերացումը մի շարք
նոր գործնական խնդիրներ և դում աղքաւ
բնակությանը հաց մատակարարելու գոր-
ծը բարելավելու բնագավառում:

Անպայման անհրաժեշտ և զարգացնել
առևտրական ցանցը: Քարտերի վերացման
նպատակն ե բարելավել ազգարնակության
առանձին պահանջների բավարարումը, վո-
րը շատ զեպքերում չեր կարողանում անել
քարտային սիստեմն իր ստանդարտ նոր-
մաներով:

Անհրաժեշտ և զգալի չափով զարգացնել
մացի թխումը: Մենք ունենք արդյունա-
բերական խոշոր շրջաններ, որինակ՝ Իվա-
նովյակի մարզը և Ռուբալը, վորտեղ գեռ շատ
քիչ չափով և զարգացել պետական-կոռպե-
րատիվ հացաթխումը:

Այսպիսի քաղաքում, ինչպիսին և Կա-
րակովսկը (Նախկին Նադեժդինը և կը), վոր-
տեղ գտնվում և Ռուբալի խոշորագույն մե-
տաղաձուլական գործարանը, բանվորներին
մատակարարվում ե 90 տոկոսով այլուր և
վոչ թե թխած հաց: Սա հացաթխման աս-
պարիզում յեղած անթույլատրելի հետա-

մացության ցայտում որինակներից մեկն ե:
Հացաթխման ասպարիզում հետ մնացած
այդ բոլոր շրջաններում անհրաժեշտ և ան-
հապաղ միջոցներ ձեռք առնել՝ կառուցելու
այսպիսի փուեր, վորոնք կարողանան տալ
բավական քանակությամբ լավորակ հաց:
Անհրաժեշտ և թխված հացի վորակին ամե-
նալուրջ ուշադրություն դարձնել մանա-
վանդ այն պատճառով, վոր քարտային սիս-
տեմը շատերին սովորեցրել և պատշաճ ու-
շադրություն չդարձնել դրա վրա: Այժմ
սպառողն ավելի մեծ պահանջներ կներկա-
յացի հացի նկատմամբ և անհրաժեշտ և,
վոր վորքան կարելի յե շուտով ձեռ տան,
իրենց նրանք, ում վոր վերաբերում և այդ:

Ապա անհրաժեշտ և բարելավել հացի
շտեմարանների գործը: Անհրաժեշտ և հա-
ցանատիկի պաշարով ապահովել բոլոր շըր-
ջանները և պետք և աչքի առաջ ունենալ
վոր բարձրանալու յե ազգարնակության
պահանջները հացի վորակի ու տեսակի նը-
կատմամբ:

Այս բոլորը ցույց ե տալիս, վոր քարտա-
յին սիստեմի վերացումը գործնական մեծ

աշխատանք և պահանջելու, պահանջելու յի
մատակարարման ներկա ուռնացած ու դան-
դաղաշարժ սիստեմի արագ վերակառուցու-
մը, չամապատասխան կենտրոնական և բո-
լոր տեղական որդանների վրա մեծ պա-
տասխանատվություն և ընկնում այդ մի-
ջոցները ճիշտ և արագորեն իրականացնե-
լու համար:

Յեկ այդ գործում հանցանք կլինի ինք-
նահուին ապավիճելը:

Այն անձարակությունը և բյուրոկրատիզ-
մը, վորով այնքան հարուստ եր քարտային
սիստեմը, կարող են մեծ չափով զգացնել
տալ իրենց այնտեղ, վորտեղ պատշաճ դե-
կավարություն և վերահսկողություն չի լի-
նի մատակարարման վերակառուցման բնա-
գավառում: Հակախորհրդային տարերը չա-
րախնդությամբ են համակվելու ամեն մի
առիթով այնտեղ, վորտեղ վերակառուցումը
կհանձնարարվի չինոմիկներին ու գրավոր
հրամաններ տալ սիրողներին և վորտեղ
խորհրդային ու կուսակցական դեկավար
որդաններն իրենց վատահելի ձեռքերում
չեն վերցնի այդ գործը:

Դրա մասին բանվորական Աջաններում
առանձնապես պետք ե մտածեն նրանք,
ովքեր մինչև այժմ հոգ չեն տարել առե-
տրական ցանցը և մասվանդ հացի թխու-
մը զարգացնելու մասին: Տեխնիկական մը-
շակույթների ըրջաններում պետք ե ժամա-
նակին հականարդված տալ պետության հան-
դեպ վատահությունը թուլացնելու փորձերի
դեմ, այն պետության, վորի վորոշումը կա-
տարելապես ընդառաջում ե բամբակագործ-
ների, վուշ մշակողների, ծխախոտագործների
լայն մասսաներին և ընդհանրապես ընդա-
ռաջում ե աշխատավոր գյուղացիներին ու
կոլտնտեսություններին:

4. Հացի տարտային սիստեմի վերացման
հաւակուրյան մասին

Հացի քարտային սիստեմի վերացման ի-
մաստն եւ ել ավելի բարելավել քաղաքների և
գյուղական շրջանների մատակարարումը, ել
ավելի բարելավել ազգաբնակության պա-
հանջները։ Քարտային սիստեմի փոխարի-
նումն առելտրով հանդիսանում եւ Խորհրդա-
յին Միության ուժերի աճման լավագույն
ցուցանիշներից մեկը, գյուղատնտեսության
մեջ տեղի ունեցած բեկման ցուցանիշը, մեր
յերկրում սոցիալիզմի ձեռք բերած նոր հա-
ջողությունների ցուցանիշը։ Մենք ավելի
ուժեղ ենք դարձել, դրա համար ել վերաց-
նում ենք քարտային սիստեմը։ Մենք քար-
տային սիստեմը վերացնում ենք այն պատ-
ճառով, վոր ուզում ենք նոր քայլ անել դե-
պի առաջ ազգաբնակության մատակարա-
րումը բարելավելու գործում։

Ներկա վորոշումը հսկայական նշանակու-
թյուն և ունենալու ամբողջ ժողովրդական
տնտեսության համար։ Նրա նշանակությու-
նը միայն մատակարարման բարելավումը
չե։ Նրա նշանակությունը շատ ավելի մեծ

է։ Քարտային սիստեմի վերացման նշանա-
կությունը կանդրագառնա յերկրի ամբողջ
տնտեսական կյանքի և նրա հետագա քա-
ղաքական ամրացման վրա։

Այն գլխավոր բանը, վորի մասին պետք
ե այժմ ասել վերաբերում և խորհրդային
առելութիւն վարդացմանը և մեր սուբլու ամ-
րացմանը։

Կուսակցության 17-րդ կոնֆերանսը գեռ
յերկրորդ հնգամյա պլանի վերաբերյալ իր
դերեկտիվներում ասել ե՝

«Միմիայն ապրանքաշրջանառության
ծավալման հիման վրա հնարավոր ե
պահովել բանվորներին և գյուղի աշխա-
տավորներին արդյունաբերական ապրանք-
ներ ու գյուղատնտեսական մթերքներ
մատակարարելու գործի հետագա արագ
բարելավումը, վորի համար իր հերթին
անհրաժեշտ ե ըստ ամենայնի ընդարձա-
կել խանութների, կրպակների ցանցը և
ամբողջ առեսարական ցանցը, իրականաց-
նելով նրա տեխնիկական անհրաժեշտ վե-
րակառուցումը։ Միմիայն այդ հիման վրա
հնարավոր ե նախապատրաստել ապրանք-

ների վաճառման նորմավորման վերացումը
և կենտրանացված բաժնման սխեմը փո-
խարինել ծավալուն խորհրդային առևտով՝
(ընդգծումն ինն եւ Վ. Մ.):

Հացի քարտային սխեմը վերացնելու
մեր վորոշումը նշանակում եւ, վոր մենք հա-
ջողությամբ ենք իրականացնում յերկորդ
հնդամյակի կարեռագույն խնդիրները:
Մեր առջև խնդիր եր դրված՝ «Նախապատ-
րաստել ապրանքների նորմավորված վա-
ճառման վերացումը և կենտրոնացված բաշխ-
ման սխեմը փոխարինել խորհրդային ծա-
վալուն առևտով»: Զի կարելի չխոստովանել
վոր կուսակցությունը և կառավարությունը
քիչ աշխատանք չեն կատարել դրա համար:
Հենց այդ դիրեկտիվի կատարումն և հան-
դիսանում նաև հացի քարտային սխեմի
վերացումը: Դրանով մենք նոր և վճռական
քայլ ենք անում ամբողջ կենտրոնացած բաշ-
խման սխեմի վերացման ուղղությամբ,
խորհրդային առեվտրի լայն ծավալման ուղ-
ղությամբ:

Կուսակցությունը միշտ ել առեվտրի ծա-
վալման հիմք համարել եւ ապրանքների

գների իջեցման քաղաքականությունը: Այ-
ժը մ նպաստավոր պայմաններ են ստեղծվում
այդ քաղաքականությունն իրականացնելու
համար:

Այստեղ գների իջեցման մասին մենք խո-
սում ենք վոչ թե նորմավորվող գների
նկատմամբ, վորոնք վաղուց կտրվել են շու-
կայի գներից: Իսկ ազատ վաճառքի բարձր
գների փոխարինումը պետական շատ ավելի
ցածը նոր գներով, անհապաղ առաջ կրերի
նաև շուկայի գների իջեցում: Կիջնեն վոչ
միայն հացի գները, այլև մյուս մթերքների
գները:

Մյուս կողմից չի կարելի պատկերացնել
վոր հացի շուկայի գների զգալի իջեցումը,
վորն անխուսափելի կլինի հացի միասնա-
կան պետական գին մտցնելուց հետո, տեղի
կունենա առանց մյուս մթերքների շուկայի
գների զգալի իջեցման: Զի կարելի նույն-
պես տարակուսելը վոր մենք հնարավորու-
թյուն կունենանք ել ավելի իջեցնելու հացի,
ալյուրի ու կրուպայի համար սահմանվող
գները: Այդ ցույց եւ տալիս, վոր գների ի-
ջեցման քաղաքականությունը գործնակա-

նապես կիրականանա արդեն մոտակա ժամանակներում:

Ի՞նչ տեղի կունենա արդյունաբերական ավրանքների գների նկատմամբ: Այդ կողմից ևս, ինչ չափով վոր խոսքը վերաբերում ե ազատ վաճառքի ու շուկայի գներին, մենք անպայման կունենանք գների իջեցում: Աշխատավարձի այն բարձրացումը, վորի մասին խոսեցինք, չի կարող բարձրացնել արդյունաբերական ավրանքների գները: Աշխատավարձի այն բարձրացումը պետությունը հատուցում ե այն յեկամուտներից, վորոնք ստացվում են առաջ քարտերով տըրվող հացի գների բարձրացումից:

Այժմ մեզ մոտ հաստատուն նախադրյալներ ե ստեղծվում, թե պարենամթերքի և թե արդյունաբերական ավրանքների գներն իջեցնելու համար: Իջեցման համար ճանապարհ ցույց կտա հացի, ալյուրի ու կրուպայի պետական միասնական գների սահմանումը: Իսկ ամեն մեկի համար հասկանալի յե, վոր գների իջեցումը հանդիսանում ե քաղաքի ու գյուղի աշխատավորների, այսինքն ամբողջ յերկրի ազգաբնակության

բարեկեցության կարևորագույն պայմանը: Կամբանա նաև խորհրդային ոռոքին: Յեթե գների ներկա յերկվությունը թուլացնում եր նրա նշանակությունը, ապա հացի միասնական գները կամրացնեն նրան: Գների իջեցման քաղաքականությանը գործնական կենսագործումն իր ընդհանուր արտահայտությունը կդանի խորհրդային ոռոքու ամրացն մեջ:

Խորհրդային ոռոքու այդ ամրացումը համապատասխանում ե աշխատավորների շահերին: Նա ավելի հաստատուն կղարձնի մեր պլանները: Նա կառողջացնի մեր պետական ապարատը: Նա կամրացնի բանվորների ու գյուղացիների դաշնոքը, կհետացնի ժողովը վերդական տնտեսության հետագա վերելքը և սոցիալիզմի աճը մեր յերկրում:

Ոռոքու ամրացումը կբարձրացնի աշխատավարձի նշանակությունն արդյունաբերության մեջ: Յեկ ձեռնարկություններում, և շինարարություններում աշխատավարձի հարցերը մեծ ուշադրություն կպահանջնեն:

Հակառակ կառավարության ու կուսակցության կտրուկ պահանջին, մեզ մոտ գործնաւ

կանորեն մինչև այժմ ել հաճախ արհամարտական վերաբերմունք կար դեպի այդ հարցերը: Թանի դեռ փողային աշխատավարձը հանդիսանում եր բանվորների աշխատանքի վարձատրման վոչ թե գլխավոր տարրը, այլ տարրերից մեկը միայն, փորն անխուսափելի յեր քարտային սիստեմի պայմաններում, նրա գերը մինչ այդ վորոշ չափով թուլացել եր արտադրության մեջ և շինարարության ասպարիզում: Այժմ աշխատավարձը դառնում է հիմնական սեղույցատոր, իսկ նրա բարձրացումը մի վճռական խթան՝ բանվորների ու ծառայողների համար: Յեվ դա պետք ե ել ավելի ուժեղացնի աշխատավարձի գերը և արտադրության և շինարարության մեջ:

Հստ գոտիների հացի գներ սահմանելը շերտավորում (տարրերություն) կառաջացնի աշխատավարձի ավելացման մեջ: Այդ շերտավորումն անհրաժեշտ ե և միայն շեշտում ե, վոր անթույլատրելի յե հավասարեցուցիչ մոտեցում ցուցաբերել աշխատավարձի գործում: Մինչդեռ մինչև այժմ ել դանդաղ ե առաջ գնում մանր բուրդուական հավասարեցման արտաքսումը աշխատավարձի բնագա

վառից: Իսկ առանց դրան չի կարող լինել նաև իրենց աշխատանքում աղնիվ լավագույն աշխատաղներին նյութական խրախուման հիշտ կազմակերպում, վորն անհրաժեշտ ե վոչ միայն նրանց շահերի, այլև պրոլետարական պետության շահերի տեսակետից:

Այդ ըստրից հետեւվում ե, վոր աշխատավարձի հարցերը արտադրության մեջ, ամբողջ արդյունաբերության մեջ, ինչպես և տրանսպորտում ու գյուղատնտեսության մեջ ներկա պայմաններում առաջնակարգ նշանակություն են ստանում:

Բնակերենի վրատեղ եր հասնում անփույթ վերաբերմունքը դեպի փողը, յերեսում ե թեկուզ հետեւյալից:—մեր մի քանի կառուցողների մոտ նույնիսկ դորձածական եր դարձել մի արտահայտություն՝ «իրացրի փողի այսինչ գումար»: Իսկ այստեղ «իրացրի» բառը պարզապես նշանակում ե ծախսեցի:

Բայց ամեն մեկի համար հասկանալի յե, վոր փողի ամեն մի ծախսում նվաճում չե: Շինարարության հաջողությունների մասին

պետք ե դատել վոչ թե պարզապես շինաւրարության մեջ «իրացված» գումարից, այլ ծախսված գումարի տրված փաստական արդյունքներից: Ամբողջովին իրացնել պետության բաց թողած միջոցները, իսկ դրա փոխարեն պետությանը տալ պլանով սահմանված շինարարության պլանի միայն կեսը՝ նշանակում ե հանցանք գործել բանվոր դասակարգի շահերի գեմ, վարովնետեղ սահմանակից ե պետական միջոցների վատնումին: Ժամանակն ե վերջ տալու պետական միջոցների այդ տեսակ «իրացմանը»:

Անձրաժեշտ ե, վոր բոլոր կառուցողները սովորեն լրջորեն հաշվել փողը: Դա կարելավի մեր շինարարությունը, դա մեծ չափով կողնի մեր տնտեսական աճմանը:

Այդպես ուրեմն մենք կանգնած ենք հետևյալ ինդրի առջև՝ ծավալել առևտուրը և ամրացնել մեր ռուբիին: Այդ ե այժմ մեր սոցիալիստական, յերկրի աճման կարևորագույն պայմանը:

Վերջ ի վերջո այստեղ գլխավորն ապրանքաշրջանառության ծավալումն ե: Հենց

դրան ե ընդառաջում հացի քարտային սիստեմի վերացյան վերաբերյալ վորոշումը: Քարտային սիստեմը կարող ե փոխարինվել միմիայն լայն առետրով՝ այսոր հացի, վաղը՝ մյուս ապրանքների առետրով:

Պետք ե հասկանալ թե ինչ պայմաններում ե կատարվում այդ և վնար առետրի մասին ե խոսվում այժմ:

Այժմ մեզ մոտ միմիային ամբողջ արդյունաբերությունը չե, վոր գտնվում ե պետության ձեռքում: Այժմ գյուղանաեւությունը ևս հիմնականում արդեն ավարտել ե իր սոցիալիստական վերակառուցումը: Գյուղանաեւության ամբողջ հիմնական այժմ գտնվում են կոլտնտեսություններում և խորտնակություններում: Վերջապես ինքն ապրանքաշրջանառությունը ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում նույնպես գտնվում ե պետության ձեռքում և նրա հետ անխղելիորեն կապված կոռպերատիվ սիստեմում:

Այժմ, յերբ մենք խոսում ենք առետրի ծավալման մասին, մենք խոսում ենք սոցիալիստական քաղաքի և կոլտնտեսական

դյուղի մեջ յեղած ապրանքաշրջանառության մասին: Կապիտալիզմի մնացորդները դեռ կենդանի յեն: Անհատական տնտեսությանը դեռ կողմնակից ե գյուղացիության մի մասը: Սակայն գյուղատնտեսության բոլոր վճռական դիրքերն արդեն գրավել են կոլտնտեսություններն ու խորհութեալությունները: Դրա համար ել առևտրի, ինչպես և խորհրդային սուբյուտ դրությունն ու դերը բոլորովին այլ ե, քան ասենք 10 տարի առաջ:

Ներկա պայմաններում ծավալուն առևտուրը նոր ուժ ե տալիս սոցիալիստական քաղաքին և կոլտնտեսային գյուղին: Սոցիալիստական առևտրի զարգացումը դարձել ե սոցիալիստական տնտեսության աճման կարևորագույն պայմանը, հաղթական սոցիալիզմի կարևորագույն պայմանը նրա առաջընթացի ճանապարհին:

Թե ինչ առևտրի մասին ե խոսքը ամենից լավ ե ասենք անցյալ տարի կենտկոմի հունվարի պլենումում ընկ. Ստալինի ասած խոսքերով: Ընկ. Ստալինն այն ժամանակ ասել ե՝

«Խորհրդային առևտրի, այս թվում նաև կոլտնտեսային առևտրի և ՆԵՊ-ի առաջին շրջանի առևտրի միջև արմատական տարբերություն կա:»

ՆԵՊ-ի առաջին շրջանում մենք թույլ ենք տվել կապիտալիզմի աշխուժացումը, թույլ եյինք տվել մասնավոր ապրանքաշրջանառությունը, թույլ եյինք տվել մասնավոր առևտրականների, կապիտալիստների, սովեկուլյանների «գործունելությունը»:

Դա ավելի կամ պակաս չափով աղաստ առևտուրն եր՝ սահմանափակված միամիայն պետության կարգավորող գերով: Այն ժամանակ յերկրի ալլրանքաշրջանառության մասնավոր կապիտալիստական հատվածը բավականին մնձ տեղ եր գրավում:»

Ապա ընկ. Ստալինը ասել եր, թե ինչպես փոխվեց գործը վերջին տարիներս՝

Ցեթե ՆԵՊ-ի առաջին շրջանում առևտուրը թույլ եր տալիս կապիտալիզմի աշխուժացումը և մասնավոր կապիտալիստական հատվածի՝ ապրանքաշրջանառության մեջ գործելը, ապա խորհրդա-

յին առևտուրը յելնում ե թե մեկի և թե
մյուսի բացասումից ինչ բան ե խորհըր-
դային առևտուրը: Խորհրդային առևտու-
րը մի առևտուր ե առանց փոքր ու մեծ
կապիտալիստների, առևտուրը, առանց
փոքր ու մեծ սպեկուլյանտների: Դա
առևտրի մի հատուկ տեսակն ե, վորը մին-
չև այժմ չգիտեր պատմությունը և վորը
կատարում էնք մենք բոլշևիկներս խոր-
հրդային զարգացման պայմաններում:

Այդպես ուրեմն այժմ գործը վերաբե-
րում ե առանց մասնավորների, առանց կա-
պիտալիստների, առանց սպեկուլյանտների
կատարվող առևտրի զարգացմանը, գործը վե-
րաբերում ե խորհրդային առևտրի զարգաց-
մանը: Այդ խորհրդային առևտրի լայն զար-
գացումը գարձել ե մեր ամբողջ տնտեսական
աճման և բանվորա-դյուլացիական զողման
ամրացման վճռական պայմաններից մեկը:

Նույնիսկ ՆեՊ-ի տարիներին, յերբ
առևտրում կենդանի յեր մասնավոր կապի-
տալիստը, մեր արդյունաբերության կապը
գյուղատնտեսության հետ՝ առևտրի միջո-
ցով ու մեքենաների մատակարարումով,
մեզ ապահովեց գործի սոցիալիստական վե-

րակառուցման նախապատրաստումն ու իրա-
կանացումը: Առևտրի զարգացումն այն ժա-
մանակ ել առաջնակարգ նշանակություն
ուներ մեր յերկրում սոցիալիզմի ուժերի
աճման համար: Ներկա պայմաններում,
յերբ գործը վերաբերում ե խորհրդային ա-
ռևտրի զարգացմանը, առանց կապիտալիստ-
ների կատարվող առևտրին, քաղաքի և գյուղի
ապրանքաշրջանառության ծավալումը վոչ
պակաս նշանակություն կունենա յերկրի
հետաքա սոցիալիստական աճման համար:

Մենք ձեռնամուխ ենք լինում քարտային
սիստեմի վերացմանը սկսելով հացից և
դրանով իսկ լայն ճանապարհ ենք հարթում
խորհրդային առևտրի զարգացման համար:
Նոր պայմաններում առևտուրն ու փողը
պետք ե նոր ձեռվ ծառայեն կոմունիզմի
գործին: Յեվ մենք կարող ենք չտարակու-
սել վոր նրանք ավելի մեծ ծառայություն
կմասնացեն մեզ: Թող ուրեմն լավ ծառայեն
նրանք այդ գործին:

Մենք վստահ քայլերով առաջ ենք գնում
և դրանում իր արտահայտությունն ե գրտ-
նում մեր կուսակցության քաղսոքականու-
թյան ճշությունը:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ
ԹԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(«Պրավդայի» նոյեմբերի 30—ի առաջնորդողը)

Իր աշխատանքն ավարտեց մեր կուսակ-
ցության կենտրոնական կոմիտեյի հերթա-
կան, նոյեմբերյան պլենումը։ Պենումի վա-
րոշումները «հացի և մի բաճի այլ մթերքների
հարտային սիստեմը վերացնելու մասին»,
«Գյուղատնտեսուրյան հաղբաժինների մասին»,
բնդունփած Վ. Մ. Մոլոտվի և Լ. Մ. Կագա-
նովիչի գեկուցումների առթիվ, հրապարակ-
ված «պրավդա»-յի յերեկվա համարում, վա-
րոնք սոցիալիզմի հաղթանակների նոր,
փայլուն ապացույցն են հանդիսանում։

Կերացված ե հացի և մի քանի այլ մթերք-
ների վաճառման քարտային սիստեմը։
Հարկավոր ե ավելի ծանրակշիռ ապացույց
ցույց տալու համար, վոր Խորհուրդների
յերկիրը սրբնթաց դեպի առաջ ե շարժվում։
Այդ լույսի տակ վրբքան վողորմելի ու
լկտի յե թվում «ԽՍՀՄ-ում յեղած սովի
մասին» զրապարտությունը, վորը տարած-
վում ե ծախու բուրժուական մամուլի կող-
մից։ Հացի քարտերի վերացումը Խորհրդա-

յին Միության մեջ՝ վերջնականապես մերկացնում եւ փաշխտական զրպարտիչներին:

Վերջին տարիների ընթացքում հացի վաճառքի քարտային սիստեմը բանվորների և ծառայողների մատակարարման բարելավման կարևորույն պայմանն եր: Գործադրոված այն ժամանակաշրջանում, յերբ գյուղատեսության մեջ գիրակշում ելին գյուղացիական մարնը, ցանուցիր տնտեսությունները, վորոնք չելին կարող բավարարել հացի հարածուն պահանջը, քարտային սիստեմը բանվորին պաշտպանում եր ազատ շուկայի չափազանց բարձր գներից: Այդ սիստեմը կատարեց իր գործը. նա ողնեց տնտեսությունը բարձրացնելու իր ներկա բարձր մակարդակին:

Դրությունն արմատապես փոխվել եւ, կուտնտեսական կարգը հաղթանակել եւ, «Պետությունն այժմ, — ասված եւ պլենումի վորոշումներում, — բավականին մեծ բանակուրյամբ հաց ունի, վորպեսզի կարողանա առանց բարտային սիստեմի, ամենուրեք հացի լայն առևտուր ծավալելու միջիցով, լիովին և անպայման ապահովել բնակչության մատակարարումը»: Այդ պայմաններում հացի և

մի քանի այլ մթերքների քարտային սիստեմը կարող եւ միայն արդելակ լինել մատակարարման բարելավման համար: Ընկ. Ստոլինի առաջարկությամբ պլենումում դըբուեց և դրականորեն լուծվեց քարտային սիստեմի վերացման հարցը:

Ի՞նչ եւ տալիս այդ բարեփոխությունը:

Տնտեսական կյանքն այժմ ազդություն ունի սիստեմ եւ: Մենք հասրավորություննենք ստանում ըստ ամենայնի ծավալել ուղարկեած գործառնությունը, ըստ ամենայնի ամրապնդել խռոնրդային ռուրիխն, Արդյունաբերության պլորեմը, գյուղատնտեսության պրոբլեմը լուծված են: Մնում եւ լուծելու ապրանքաշրջանառության պրոբլեմը: Շվեյցարիայի յերկրի տնտեսական կյանքը կարույնա ազդություն նման խիմիւ—ասում եր ընկեր Ստոլինը կուսակցության XVL համագումարում, — իսկ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն ունենան իրենց արտադրանքի հետագա աճման խթան, հարկավոր եւ ունենալ ևս մի պայման, այն և ծավալուն ապրանքաշրջանառություն քաղաքի և գյուղի միջև, յերկրի, շրջանների և մարզերի միջև, ժողովրդական տնտեսության

զանազան ճյուղերի միջև։ Անհրաժեշտ է, վոր յերկիրը ծածկված լինի առևտրական բազաների, խանութների, կրպակների հարուստ ցանցով։ Անհրաժեշտ է, վոր այդ բազաների, խանութների, կրպակների կանաչալիքով ապրանքներն առանց կանգ առանելու շրջանառություն անեն արտադրության վայրերից դեպի սպառողը։ Անհրաժեշտ է, վոր այս գործի մեջ ներգրավվեն և՛ պետական առևտրի ցանցը, և՛ կոռպերատիվ առևտրի ցանցը, և՛ տեղական արդյունաբերությունը, և՛ կոլտնտեսությունները, և՛ մենատնտես գյուղացիները։

Հենց այս ե, վոր մեզ մոտ կոչվում է ծավալուն խորհրդային առևտուր, առևտուր առանց կապիտալիստների, առևտուր, առանց սպեկուլյանտների։

Հացի քարտերի վերացումը նշանակում է վերացնել բաշխման մեքենայական սիստեմը, վերացնել բրոնյան, դրանք փոխարինել խորհրդային առևտրով։ Ծավալուն ապրանքաշրջանառությունը պետք է նպաստի գյուղատնտեսության, մասնավորապես անասնապահության ել ավելի արագ աճին։ Խորհրդային առևտրի պարտադիր ուսու-

մանը սպառադին հարգելն ե։ Քարտային սիստեմի ժամանակ գոյություն ունի առհասարակ սպառող։ Պայուղի քանակը, քարտերի քանակը ծածկում պատճեղում ե կոնկրետ սպառողին՝ նրա իր անհատական ձաշակով, պահանջներով։ Քարտերի վերացումը պահանջում է իսկական կուլտուրա առևտրական գործում, առևտրական ցանցի մեջ ձկունություն։

Այժմ ունեալ բազայի վրա յև դրված գների իջեցման հաղաբականությունը՝ ծովովը դաստիարական տեսեսուրյան բօլոր ճյուղերում։ Պարզ ե, վոր յերբ հացի տարրեր գներ գոյություն ունեին և յերբ պետությունը հսկայական միշտ ըցներ եր ծախսում, վորպեսզի պահպաներ չափազանց ցած նորմավորված գները, չեր կարելի խոսել մյուս բոլոր մթերքների ու ապրանքների գների իջեցման մասին։ Հացի միասնական գինը մոտիկ ապագայում անխուսափելիորեն կիջեցնի գյուղատնտեսական բոլոր մթերքների գները։

Վերջապես, հացի քարտերի վերացումով արմատախիլ ե արվում սպեկուլյացիայի հնարավորությունը։ Վարդան որինակներ կային և կան, յերբ քարտով չափազանց ցած գնով

գնված հացը, հենց նույն տեղում, հացի խառնութիւնի շեմքին, ծախզել ե գնածից մի քանի անգամ բարձր գնով: Վերքան սպեկուլյանտներու մութ գործարարներ հարստանում ե յին հացի սպեկուլյատիվ առևտրով: Այժմ սահմանվում ե պետական հաստատուն միասնական գին—աղատ վաճառքի դոյություն ունեցող բարձր գների և նորմավորված չափազանց ցածր գների մոտավորապես միջին մակարդակին: Դա, ի հարկե, որակարգից չի հանում հացի սպեկուլյացիայի ամեն տեսակ փորձերի և դասակարգային թշնամու մյուս յերաշների գեմ անշեղ պայքար մղելու խընդիրները:

Քարտային սիստեմի վերացման և հացի, ալյուրի ու կրուպայի մանրածախս միասնական գներ սահմանելու առնջությամբ կենտրոնական կոմիտեյի պլենումը վորոշումը ընդունեց 1935 թ. հունվարի 1-ից բարձրացնել բանվորների և ծառայողների աշխատավարձը, ուսանողների թոշակները և կենսաթոշակավորների կենսաթոշակները: Աշխատավարձ դառնոմեւ աշխատանքիա բարձրողականության բարձրացման լիարժեք գործիքը:

Սահմանվում են նույնպես գյուղատնտեսական հումքի մթերման բարձրացրած գներ, վորքան վոր գաղտրեցվում ե այդ մթերումների ապրանքավորումը հացով:

Խոշորագույն նշանակություն ունի Կենտրոնական կոմիտեյի պլենումի վորոշումը ոյզուղատեսաւրյան հաղբածիների մասին»:

Մեքենաատրակտորային կայանների քաղաքածինները, վորոնք կուսակցությունն ըստեղծել եր այն մուենախին, յերբ նա զեմանեց մի շարք դժվարությունների՝ գյուղատնտեսության զարգացման գործում, վիթխարի աշխատանք են կատարել: Կոլտնտեսությունների զեկավարման մեջ այն թերությունները, վորոնք մատնանշել եր ընկեր Ստալինը իր «Գյուղի աշխատանքի մասին» ճառում, այժմ զգալի չափով վերացվել են հատկապես քաղբաժինների բոլշևիկյան աշխատանքի շնորհիվ: Քաղբաժինների ջանքերով կուսակցության շուրջն ե համախմբվել կոլտնտեսականների բաղմամարդ անկուսակցական ակտիվ: Կոլտնտեսություններն իրենց տնտեսական հաջողությունների համար քիչ պարտական չեն քաղբաժիններին, վորոնք առաջավոր կոլտ

աշնաեսականների սգնությամբ զրոհ են
տվել լողիների և գործալքողների դեմ, կոլ-
տնտեսականների մասսային գոտքի յին հա-
նել պաշտպանելու հանրային սեփականու-
թյունը, պայքարելու հանուն պետության
հանդեպ ստանձնած պարտավորությունների
հառաջնահերթ կատարման։ Մրցակցության
և հարվածայնության աճը կոլտնտեսություն-
ներում, դաշտային աշխատանքների ավելի
բարձր վորակը—կոլտնտեսականների հետ
քաղաքինների աշխատողների ամենորյա-
շիման ուղղակի հետեանքն ե, վորոնք
պարզ և մատչելի լեզվով կոլտնտեսական-
ներին բացատրում են բոլեկիկյան կոլտնտե-
սությունների և ունեոր կյանքի լոգունգի
նշանակությունը։

Սակայն քաղաքինները կուսակցական
կազմակերպության արտակարգ ձև եյին,
նրանց առաջ կանգնած եյին առանձնահա-
տուկ, հարվածային խոդիներ։ Այժմ, ինչ-
պես այդ մատնանշեց պլենումը, գյուղի ղե-
կալարումը բարլացել ե, քաղաքիններն
ինքնին արդեն քիչ են։ Զե՛ վոր այժմ բանը
միայն այն չե, վոր կարողանանք կատարել
ցանքի, բերքահավաքի, մթերման պլանը։

Հարկավոր ե ավելի լայնորեն ընդգրկել
գյուղի կյանքի բօլոր կողմերը։ Դպրոցների,
հիմանդանոցների, կինոների, ակումբների,
ձանապարհների, կուլտուրա-կենցաղյին
զանազան հիմնարկների շինարարությունը—
այս բոլորը պահանջում են ամեապնդի կու-
սակցական և խորհրդային նարմալ որգանները,
վարոնք վյալական աշխատանքն ընդգրկում են
եւա վոդջ բազմազանությամբ։

Հենց գրա համար կենտրոնական կոմի-
տեյի պլենումը վորոշում ընդունեց մեքենա-
տրակտորային կայանների քաղաքինները
վերակազմելու սովորական կուսակցական որ-
դանների և քաղաքածինները միաձայլու-
կուսակցության գոյություն ունեցող շրջա-
նային կոմիտեների հետ։ Ավարավում ե շըր-
ջանացումը, նոր շրջաններ ու մարզեր են
կազմվում, կառավարման որգաններն ել ա-
վելի յեն մոտենում գյուղին։ Կուսակցության
շրջանային կոմիտեների, շրջանում միասնա-
կան կուսակցական ղեկավարության ամրա-
պլնդումը ներկայումս կարևորագույն խըն-
դիրն ե։

Գյուղանենեսության նետագա վերելի հա-
մար մղվող պայմանը պեսք և շարունակվի

անդադրում ուժով։ Ծիծաղելի կլիներ ասել,
վոր գյուղատնահսության մեջ անցել ենք
բոլոր դժվարությունները և կարելի յև ան-
զարթնում քնել։ Դեռ շատ աշխատանք կա,
ոեւ ևս մի շարք կուտնտեսություններում
կուլակային տարրերի քայքայիչ աշխատան-
քը վերջնականապես չի ջախջախված։ Շըր-
ջանացման ավարտումը, շրջանում միասնա-
կան կուսակցական զեկավարության ամրա-
պնդումը պետք է խոշոր փոփոխություններ
առաջացնեն դյուզի տնտեսական և քաղա-
քական կյանքում։ Այժմ հնարավորություն
կա հիմնավորապես ձեռնամուխ լինելու կուլ-
տուրական դորձերին, ֆինանսներին, հետա-
մնաց կուտնտեսությունների ամրապնդմանը։
Կոլեկտիվացման ավարտումը, այդ բառի լիա-
կատար իմաստով, որվա կարեռագույն
խնդիրն ե դառնում։

Քաղբածիների բոլոր աջակացողներն ա-
ռաջն բացառության անպայման կմնան որ-
դանեներում աշխատելու։ Հարկավոր ե ամենա-
խիստ կերպով վարվել այն կազմակերպու-
թյունների զեկավարների հետ, վորոնք կը-
փորձնեն քաղբածնի աշխատողներին քաղա-
քային աշխատանքի քարշել։

Կենտրոնական կոմիտեյի նոյեմբերյան
պլենումը նշանակալից ե նրանով, վոր կու-
սակցությունը հացի քարտերի վերացման
մասին և Մեքենատրակտորային կայան-
ների քաղբածինները կուսակցության շրջա-
նային կոմիտեների հետ միաձուլելու մա-
սին վորոշումներ հանելով, գյուղատնտեսու-
թյան բնագավառում իր կատարած աշխա-
տանքի հանրագումարն արեց։ Կոլտնտեսա-
կան կարգի լուակատար հաղթանակը գյու-
ղում, կոլտնտեսությունների գործնական
զեկավարման արմատական բարելավումը—
ահա թե ինչի վրա յեն հիմնվում պլենումի
վորոշումները։

Պլենումի վորոշումները միջոցառումների
միասնական զղթայեն, վորոնք վերաբերում
են մեր յերկրի բնակչության ամենալայն
շրջաններին։ Կուսակցությունն ամեն բան
կանի, վորպեսզի դրանք ամենակարճ ժամ-
կետում իրականացվեն կյանքում։ Զպետք
ե լինի վոչ մի կոմունիստ, բանգոր, կոլտըն-
տեսական, ծառայող, վորն ամենառաջադիր
կերպով չուսումնասիրի կենտրոնական կոմի-
տեյի նոյեմբերյան պլենումի վորոշումները

Պատ. խմբովից Հ. Քառարյան.
Թարգմանեց Հ. Թուլցյան. Տէս. խմբ.
~~████████~~ Արքադրիչ Մ. Սահակյան



Հրատ. 269, տիրած 15000
Դաշնամարտ 7890, պատվեր 332, ինդեքս՝ ԾՌ-17
Կուսարատի տպարան, Ցերելան

ԳԻՒԸ ՅՈ Կ.

Цена 30 к.



В. М. МОЛОТОВ

ОБ ОТМЕНЕ КАРТОЧНОЙ СИСТЕМЫ
ПО ХЛЕБУ

Доклад на заседание ЦК ВКП (б)
25 ноября 1934 г.

Партиздат, 1934 Эреван

«Ազգային գրադարան



NL0205803

31.380